



Holy Trinity Armenian Church
14 Woodlawn Avenue West Toronto 7, Ontario

Jirayr Tashjian *Pastor*

Փետրուար 28, 1966
Թորանթօ, Գանատա

Բարձրաշնորհ
Տ.Սիրոն Ս.Արքեպիսկոպոս Մանուկեան
Բարեջան Առաջնորդին Հայոց Ամերիկայի եւ Գանատայի
Որ ի նիւ Եորթ քաղաքի

Սրբազան Հայր,

Այսու կու գանք հաղորդելու Ձերդ Սրբազնութեան թէ
Ս.Երրորդութիւն Եկեղեցւոյ ծխական համայնքը իր Տարեկան
ընտրողական ժողովը ունեցաւ Կիրակի Փետրուար 20, 1966
կէսօրէն ետք ժամը 2.30էն սկսեալ եկեղեցւոյս 110 Տրատու
անդամներէն 56 անդամներու ներկայութեամբ:

Ժողովի Ատենապետութիւնը շատ ձեռնհասօրէն վարեց
Տիար Զաւէն Մեսրոպեան, ժողովիս Ատենաղարկութիւնը վարեցին
Տիարք Կարօ Տէիրմէնճեան եւ Ժիրայր Երէցեան:

Օրակարգի հարցերուն հետ օրինաւոր քուէարկութեամբ
տեղի ունեցաւ ծխական Խորհուրդիս երեք պաշտօնէ դադարեալ
եւ երկու հրաժարեալ անդամներուն տեղ նոր անդամներու
ընտրութիւնը հետեւեալ ութանուն ցանկէն.—

Տիարք Օննիկ Ժալեան	ստացած	53	քուէ
Յարութիւն Արթինեան	,,	50	,,
Ժիրայր Բէտէրեան	,,	47	,,
Կարօ Տէիրմէնճեան	,,	43	,,
Հայկ Սէլեան	,,	39	,,
Մակար Արթինեան	,,	26	,,
Պետրոս Չիլինկիրեան	,,	14	,,
Աւետիս Կիւլեւսէրեան	,,	6	,,

Համաձայն իրենց ստացած վստահութեան քուէներուն, այսու
պիտի խնդրէինք որ Ձեր բարձր տնօրէնութեամբ վաւերացնէիք,
իբր նորընտիր անդամներ ծխական Խորհուրդիս:

Մատչելով ի համբոյր Ձեր Ս.Աջոյն

Ձերդ խոնարհ ուղղիկ
Ժիրայր Արքեպիսկոպոս Մանուկեան Հովիւ

*Գանատայի
Արքեպիսկոպոս*

